ՀՐԵՂԵՆ ՁԻՆ ՈՒ ՍՈՂՈՄԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի թաքավոր ա ըլըմ, իրեք տղա յա ունենըմ (չիմ էդ անդեր թաքավորնի են ըլըմ, վայ տամ դրանց գլխին)։ Էդ թաքավորը մի ջգովի սերմն ա ճարըմ, տանըմ ա ցանըմ։ Օրի մի օր ասըմ ա. «Հլա գնում տենամ դո՞ւս ա էկել»։ Գնըմ ա տենըմ՝ արտը լավ դուս ա էկել, հմա կես տեղը, մի պուճուր տեղ նիե պլոլիկ ըրածած ա։ Դես ա մտիկ անըմ— դեն, տենըմ ա ղրաղիցը մի իզ էլ ա մեչը չի մտել։
Մնըմ ա հուշ էլած, ասըմ ա.— Հլբաթ երդնքիցն ա վեր էկել ըրածել։
Տղերանցն ասըմ ա.— Բուսու պիեցեք, հլա տեհեք էդ ի՞նչ ա։
Էդ թաքավորը տղերանց էրկու վենձին շատ ա սիրելիս ըլըմ, պուճուրն աչկից ընգած ա ըլըմ։ Վենձն ասըմ ա.— Ես կգնամ։
Գնըմ ա մխելի կենըմ ա, հմա քունը տանըմ ա։ Դա քնած ա ըլըմ, եդ էն բանը երգնից վեր ա գալի ըրածըմ ա՝ եդ գնըմ, դա կարըմ չի տեենա։ Եդ ըռավոդրը քուցին-քուցին անելեն եդ ա գալի։
Հմի էլ միչնեկն ա ասըմ.— Դու կարացիր ոչ, հմա ես գնալ տիմ դդնուլ։ Դա էլ ա վի կենըմ, գնըմ, որ տենա։ Հմա դա էլ ա վենձ ախպոր օրն ընգնըմ, կարըմ չի տենա։
Ըժու հմի էլ պուճուրը տի գնալ-գդնիլ։
Ասըմ են.— Ա՛յ ֆողը քու գլխին, ա՛ կեղտոտ Սողոմ, մենք գդանք ոչ, հմի դուն ես ուզըմ գնալ գդնի՞լ։
Մսխարա են դնըմ, դրա վրա ծիծաղըմ են։ Դա անգաճ չի դնըմ, ըրիգունը մութն ընգնըմ ա թե չէ, վի ա կենըմ մի թոգ ա վի ունըմ, մի աղլըխըմ էլ մխելի աղ ա փթաթըմ, գնըմ ա։
Գնըմ ա մատը կտրըմ, աղը վրեն ա ածըմ, որ մխկտա. ցավիցը քնի ոչ։ Գշերվա մի վախտը մին էլ տենըմ ա, հրես երգընքիցը մի ձի վեր էկավ, արտի կես տեղը կագնեց։ Հլե դա ուզըմ ա ըրածի, թոգը քամանդ ա գձըմ էդ Սողոմն ու բռնըմ։
Ուզըմ ա տանի գեղը, դա դանչանք ա անըմ, ասըմ ա.— Ինձ տանիլ մի, իմ մազիցը պոկե, կշտիդ պիե, որ վախտը տեղդ նեղ ըլի, մազս ծուխ արա, ես կգամ քի քոմագ։
Էնա դա մազը պոկըմ ա, վեր ա թողըմ, ասըմ ա.— Գնա, տերը քեզ հետ։
Գալիս ա տուն, ասըմ են.— Տեհա՞ր։
Ասըմ ա.— Չէ՛։
Ասըմ են.— Ա՛յ ֆողը քու կեխտոտ գլխին, մենք տեհանք ոչ, դուն էիր ուզըմ տենա՞լ։
Դրա վրա ծիծաղըմ են, մսխարա են դնըմ, գլխին էլ տալիս են։
Անց ա կենըմ մխելի վախտ, մի ուրիշ թաքավորի ախչիկ ասըմ ա.— Ով իրան ձիուն վեր էլած գա, իմ օխտը հարգանի պալատի վերի ատեժիցը մատնուքըս մատիցս հանե, ես նրան կուզեմ։
Սաղ ջահելնին դուս են դառնըմ, իրանց ձիանուն վեր են ըլըմ, զուքվըմ, սազով սարքվըմ, գնըմ են, որ բալի էդ բախտն իրանց ընգնի։ Էն էրկու վենձ ախպերտինքն էլ իրանց ձիանն են սարքըմ (ամենալավ ձիանն են ջգըմ), ամեն մինը մի լավ ձիու վեր ա ըլըմ. ցինգիրցինգիր անելով գնըմ են։
Սողոմն ասըմ ա.— Ինձ էլ տարեք, ի՞նչ կլի։
Ասըմ են.— Ձենդ կտրե՛, կեխտոտ շուն, դո՞ւն ինչ ես, որ գաս ընդի, ձիանու ոտի տակն ընգնիս։
Դրա գլխին փամփլըմ են, իրանք ձիանուն վեր են ըլըմ, գնըմ։
Էն նաչարը միտկ ա անըմ, միտկ, ասըմ ա.— Սրանից էլ նեղ տեղ չի ըլիլ, արի մաղը ծուխ անեմ։

Վեր ա ունըմ, էն հրեղեն ձիու տված մազը ծխըմ, հլե մին էլ տենըմ ա— հրե հրեղենը երգընքից դվեր էկավ, թամքած հազրած։ Վեր ա ըլըմ, գնըմ ա նրանց դեսը թողըմ, տալիս անց կենըմ։ Գնըմ ա պալատի դռանը դես քշըմ, դեն քշըմ, սրանանրան էլ տալիս ա իրանց ձիանու վրիցը թոլ անըմ, խալխին ծիծաղացնըմ, իրան ախպերտինքն էլ հասնըմ են, նրանց էլ ա թոլ անըմ, ծիծաղըմ, եդնա հրեղենին մի դայիմ պլետ ա տալի, բցրանըմ ա, ախչկա թշիցը մի դայիմ պաչըմ ա, հմա մատնունքը հանըմ չի, եդ եդ ա դառնըմ, գալիս ա ձին թողըմ ա, ինքը գնըմ տուն։
Էն ախպերտինքո գալիս են տուն, եդ դրա գլխին տալիս են, ասըմ են.— Այ ֆողը քու գլխին, ուզեիր գաս ընդի մեր գլխին կրակ։ Մի ձիավոր էկավ, էն թավուր ձին խղացրուց, սրան-նրան էն թավուր թոլ արավ ձիանու վրիցը (հմա իրանցն ասըմ չեն), գնաց Էն թավուր թաքավորի ախչըկա թշիցը պաչեց, որ էլ ասելու ոչ, եդ թողաց— գնաց, հմա մատնուքը հանեց ոչ։
Ասըմ ա.— Դե ի՞նչ անեմ, ինձ տարաք ոչ, որ ես Էլ տենեի։
Մերն ասըմ ա.— Դրան էլ կտանեիք է՞լի, մեխկ ա։
Ասըմ են.— Էդ շաշն ի՞նչ ա, որ դրան էլ տանինք, դա թող դազանոցն ավլե։
Էքսի օրը դրանք եդ վեր են կենըմ, վեր են ըլըմ իրանց սոխկոռ ձիանուն, գնըմ։
Դրանք գնալուց եդը դա էն մազիցը եդ ծուխ ա անըմ, տենըմ ա եդ հրեղենն էկավ։ Վեր ա ըլըմ, եդ գնըմ, եդ նհե յա անըմ, հմի Էլ դնըմ ա ախչըկա դոշիցը պաչըմ, եդ եդ դառնըմ, գալի։
Ըրիգանը եդ ախպրտինքը գալիս են, եդ դրա վրա մսխարա են գնըմ, ծիծաղըմ, գլխին տալի։
Դա ասըմ ա.— Ի՞նչ կլի ինձ էլ տանիք։
Մերներուն էլ շատ դանչաք ա անըմ, ասըմ են.— Գալիս ա, դա, հմա որ ձիու ոտի տակն ընգնի-սատկի, մենք մեղավոր չենք։
Դրան մի քոսոտ դաթիր են տալի, վեր ա ըլըմ, հետներուն ճամփա ընգնըմ։ Նրանք աղաք են ընգնըմ, թոցնըմ, ինքը կամաց-կամաց գնըմ ա։ Գնըմ ա մի կարմունջի կուշտ հասնըմ, տանըմ ա էդ դաթիրը կարմնջի տակին կապըմ, մազը ծուխ անըմ, եդ տենըմ ա հրես հրեղենն Էկավ։ Նստըմ ա, գնըմ ա եդ նրանց դես ա խաղացնըմ, դեն ա խաղացնըմ, եդ մի դայիմ պլետըմ ա, թոցընըմ ա, գնըմ ա ախչկա համ թուշն ա պաչըմ, համ դոշը, համ էլ մատնուքը հանըմ ա, եդ-եդ ա թոցնըմ, գալի։ Գալիս ա կարմունջի կշտին վեր գալի, հրեղենը վեր թողըմ, Էն դաթրին վեր ա ըլըմ, ցինդիր-ցինդիր անելով գալի տուն։ Ոսկե մատնուքը հլե նհե վլվլալիս ա ըլըմ, իր մատն ա անց կացնըմ, եդո ձեռնաղլուխը հանըմ ա, վրովը փթաթըմ։ Ախպերտինքը եդ են գալի, տենըմ են տասն ա։
Ասըմ են.— Բա հլե ասեիր, բա խի՞ չի Էկար։
Ասըմ ա.— Դե ես՞ի՞մ, էդ քոսոտ դաթիրն ինձ տվիք. հլե մչա տվի որ, հրես ձեռըս յարա ա էլել, կապել եմ։ Դրանք եդ դրա վրա ծիճաղըմ են, տնազ են անըմ, գլխին տալի։
Եդնա էն թաքավորն ասըմ ա.— Ով որ իմ ախչըկա մատնուքը հանել ա, թող գա իրա դսմաթը տանի։
Անց ա կենըմ մխելի վախտ, տենըմ ա ոչ ով գնըմ չի։ Եդնա մի լավ պատրաստութին ա տենըմ, ջահելնուն չիմնուն էլ կանչըմ ա, ուտացնըմ, խմացնըմ, ախչիկն էլ մեչներուն ման ա գալի, գդնըմ չեն, ասըմ ա.— Հլա գնացեք տեհեք էլ ո՞վ ա դռանը մնացել, բերեք։
Գնըմ են տենըմ հրե Սողոմն իրանց դռանը ուրաքր ձեռին տաշ ա անըմ։
Ասըմ են.— Խի՞ չես գալի։
Ասըմ ա.— Պարապ չեմ, փոցխն եմ շինըմ, որ գնամ խոտ հվաքեմ։
Ասըմ են.— Բան չի կա, մի սհաթ արի, թաքավորը կանչըմ ա, եդ կգաս։

Շատ որ զահլեն տանըմ են, գնըմ ա։ Ըստիանընդիան վրեն ծիծաղըմ են, ասըմ են. «Կեխտոտ Սողոմն էլ էկավ, կեխտոտ Սողոմն էլ էկավ», հեչ, գնըմ ա։ Թաքավորի ախչիկը գալիս ա դրա ձեռներին մտիկ ա անըմ, տենըմ ա մատը փթաթած ա։
Ասըմ ա.— Հլա փաթաթանը եդ արա։
Ասըմ ա.— Տաշ անելիս ձեռս կտրել եմ, ցավըմ ա, կարալ չեմ։
Թաքավորն ասըմ ա.— Բան չի կա, բաց արա, ես սղացնել կտամ։
Էնա բաց ա անըմ, մատնուքը վլվլում ա, շողքն ընգնըմ ա օջորքը, նոր ըտի թաքավորի ախչիկը ուրխանըմ ա, գալիս ա ձեռը բռնըմ ա, տանըմ են թախտին նստացնըմ, օխտն օր, օխտը քշեր հրսանիք են անըմ, էն էրկու ախպերտինքն էլ ընդի մնըմ են բերաններուն բաց արած, ասըմ են.— Էս փչվածըմը սհե հունար կար, մենք գիդեինք ոչ։
Նոր ըտի նհանք հասնըմ են իրանց մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին, բալա ջան։